

Ֆ. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Դ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ՄՈՐՖՈՄԵՏՐԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԴՐՄԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովրդական տնտեսության զարգացման բարձր տեմպերի, բնակչության աճի, ինչպես նաև խիստ սահմանափակ հողային ռեսուրսների պայմաններում հանրապետության բարդ լեռնային ռելիեֆի բազմակողմանի ուսումնասիրությունը և նրա նպատակասլաց օգտագործումը ներկա ժամանակաշրջանում դարձել է կենսական անհրաժեշտություն:

Առանց ռելիեֆի որակական և քանակական ցուցանիշների մանրակրկիտ ուսումնասիրությունների անհնար է գյուղատնտեսության արտադրության կազմակերպումը, որը բավականի զգայուն է ռելիեֆի թեքությունների, մասնատվածության, ինչպես նաև լանջերի դիրքադրությունների նկատմամբ:



ՀՍՍՀ ԳԱ աշխարհագրության բաժնում վերջին տարիներս աշխատանքներ են տարվում հանրապետության տերիտորիայի մորֆոմետրիական խոշոր մասշտաբի քարտեզների կազմման և դասակարգման ուղղությամբ: Կազմված քարտեզների օգնությամբ հաշված են ցուցանիշների զրաված մակերեսները:

Հողվածում բերված է հանրապետության տերիտորիայի մասնատման խորության, խտության և լանջերի դիրքադրությունների քանակական տվյալները մշակված ըստ բարձրագույն գոտիների և վարչական շրջանների (աղյուսակ 1, 2), որոնք հնարավորություն են տալիս որոշակի նպատակների համար դասակարգել հանրապետության տերիտորիայի ռելիեֆը, ըստ նրանց քանակական հատկանիշների, որը արժեքավոր նյութ կարող է տալ պլանավորող, նախագծող կազմակերպություններին և գյուղատնտեսության բնագավառում աշխատող շատ մասնագետներին: Այդ տվյալների օգնությամբ կարելի է բացահայտել գյուղատնտեսական կապերի տեղաբաշխման վարչական շրջանների ռելիեֆային պատասխան պատկերացումը հնարավորությունները, ինչպես նաև միջոցառումներ մշակել ճիշտ օգտագործելու եղած գյուղատնտեսական հողահանդակները:

Մորֆոմետրիկ ցուցանիշները քարտեզագրելիս մենք առաջնորդվել ենք ոչ թե միասնական, տիպային լեզենդայով, այլ մշակել ենք նոր լեզենդաներ, ելնելով ուսումնասիրվող տերիտորիայի առանձնահատկություններից, քարտեզի մասշտաբից, ուսումնասիրության բնույթից և նպատակից:

Լեռնային երկրներում ռելիեֆի կարևորագույն մորֆոմետրիկ ցուցանիշների թվին են պատկանում մակերևույթի թեքությունները (նկ. 1), որոնք անմիջական ազդեցություն են գործում տերիտորիայի ամբողջական յուրացման և օգտագործման վրա, ընդ որում այդ ազդեցությունը փոփոխվում է կախված տնտեսության ճյուղից և թեքության քանակական մեծությունից¹:


¹ Մակերևույթի թեքությունների քարտեզագրման և ստացված քանակական տվյալների վերլուծության արդյունքները հրապարակված են առանձին հոդվածով (Валесян Л. А., Геворкян Ф. С., Погосян Д. А., Тамазян А. А. Некоторые результаты картирования и хозяйственной оценки уклонов поверхности Армянской ССР «Изв. АН Арм. ССР, Науки о земле», XIX, № 6, 1966).




Նկ. 1. Հատված ՀՍՍՀ-ի մակերևույթի թեքությունների քարտեզից (աստիճաններով):
1. Մինչև 1, 2. 1—3, 3. 3—5, 4. 5—8, 5. 8—12, 6. 12—16, 7. 16—20, 8. 20—30,
9. 30—40, 10. 40 և ավել:

ՀՍՍՀ-ի մակերևույթը կտրտված է տարբեր մեծության ու ուղղության բազմաթիվ հովիտներով, որոնք խիստ դժվարացնում են տերիտորիայի յուրացումը: Ռելիեֆի կտրտվածությունը բնութագրելիս օգտագործվում է «մասնատված», «թույլ մասնատված», «խիստ մասնատված» և այլ տերմիններ, որոնք արտահայտում են միայն մասնատման որակական կողմը: Մասնատված քանակապես բնութագրելիս գոյություն ունի մասնատման խտության գործակից մեծությունը, որը ցույց է տալիս միավոր մակերեսի վրա հովտածորակային ցանցի երկարությունը (նկ. 2): Մասնատման խտության գործակցի մեծությունը կախված է մթնոլորտային տեղումների քանակից և հաճախականությունից, ջրհոսքի ներծծման և գոլորշիացման հարաբերակցությունից, ապարների դիմադրողականությունից և այլ գործոններից: Այս գործակցի մեծացմանը նպաստում է նաև գյուղատնտեսական աշխատանքների սխալ կազմակերպումը (լանջերի ոչ ճիշտ վարը, անասունների անսխառն արածեցումը, ոռոգման ցանցի անորակ կառուցումը, անտառահատումը և այլն):

Ելնելով մասնատման խտության աստիճանից, հանրապետության տերիտորիայում կարելի է առանձնացնել հետևյալ տիպի տեղանքներ:





Նկ. 2. Հատված մասնատման խտության քարտեզից (կմ/կմ²): 1. Մինչև 0.2, 2. 0.2—0.4, 3. 0.4—0.6, 4. 0.6—0.8, 5. 0.8—1.0, 6. 1.0—1.2, 7. 1.2—1.4, 8. 1.4—1.6:

1. Չմասնատված և թույլ մասնատված տեղանքներ (գործակիցների մինչև 0,2 մեծությամբ): Նման մասնատում ունեն Արարատյան դաշտի կենտրոնական մասը, Շիրակի դաշտի արևելյան հատվածը, Արագածի արևմտյան լանջերը, Հրազդանի և Նոաթմբերի հրաբխային սարավանդները և այլն: Էրողիոն պրոցեսները այստեղ արտահայտված են թույլ, մակերևութային հոսքի կարգավորման համար հատուկ հակաէրոզիոն միջոցառումներ չեն սլահանջվում: Այս տեղամասերը գրավում են հանրապետության տերիտորիայի 5,81%-ը:

2. Միջին մասնատվածության (0,2—0,6 գործակիցներով) տերիտորիաները են հանդիսանում հարթավայրային մնացած շրջանները, հրաբխային սարավանդները (Նղվարդի, Կոսույքի, Շամիրամի, Նոաբլուրների), Արագած լեռնադանգվածի և Գեղամա բարձրավանդակի մերձ-դազաթային հատվածները: Այստեղ նկատվում է էրոզիոն պրոցեսների աշխուժացում, սակայն տեղումների մեծ մասը ջրաթափանց ապարների տարածման շրջաններում ներծծվում է և մակերևութային հոսքը մասամբ բացակայում է: Ցածրալեռնային և նախալեռնային շրջաններում նպաստավոր պայմանների կան սելավների ձևավորման և դարգացման համար: Միջին մասնատվածության տերիտորիաները գրավում են 6771,24 քառ. կմ տարածություն (23,84%):

3. Խիստ մասնատված տերիտորիաները (0,6—1,2 գործակիցներով) զբաղեցնում են հանրապետության 60,05%-ը և տարածվում են ինչպես հրաբխային, այնպես էլ ծալքաբեկորային լեռներում: Այստեղ զարգացած են էրոզիոն պրոցեսները, հատկապես նախալեռնային շոր գոտիներում:

4. Շատ ուժեղ մասնատված տեղանքները (1,2-ից բարձր գործակիցներով) հիմնականում գտնվում են Վեդու շրջանի, Վայքի և Զանգեզուրի միջին բարձրու-

Աղյուսակ 1


Հայկական ՍՍՀ մորֆոմետրիկ ցուցանիշների մակերեսները
ըստ բարձրագույն զոտիների (կմ²)

Մորֆոմետրիկ ցուցանիշներ		Դիֆֆերենցիալ բարձրագույն զոտիներ (մետրերով ծովի մակերևույթից)						Ընդամենը Հայ- կական ՍՍՀ-ում	
		Ցածր լեռնային (մինչև 1500)		Միջին բարձրու- թյան լեռներ (1500—2500)		Բարձր լեռներ (2500-ից ավել)			
		կմ²	%	կմ²	%	կմ²	%	կմ²	%
Մասնատման խտու- ն (հոկտա-նոբրային ցանցի երկարությունը կմ/կմ² վրա)	Մինչև 0.2	886.37	3,12	742,97	2,61	20,33	0,07	1649,57	5,8
	0.2—0.4	1266.04	4,46	1165,89	4,1	174,07	0,61	2606,0	9,17
	0.4—0.6	1065.66	3,75	2076,78	7,32	1022,8	3,6	4165,24	14,67
	0.6—0.8	1554.33	5,5	3254,04	11,46	1283,81	4,52	6092,18	21,48
	0.8—1.0	1293,17	4,54	3265,59	11,51	1337,05	4,72	5895,82	20,77
	1.0—1.2	1386,02	4,86	2944,15	10,37	732,88	2,58	5063,05	17,81
	1.2—1.4	674,1	2,37	1302,47	4,59	150,65	0,53	2127,22	7,5
	1.4—1.6	148,4	0,52	299,7	1,05	49,85	0,18	497,95	1,75
	1.6 և ավել	75,7	0,27	196,0	0,69	25,6	0,09	297,3	1,05
Մասնատման խտու- ն (գե- տերի տարածության խտու- նը ըստ բարձրագույն, մետրերով)	Մինչև 50	2815,15	9,51	35980,8	12,67	481,87	1,71	6895,1	24,29
	50—100	852,9	3,0	1640,99	5,78	879,66	3,1	3373,55	11,88
	100—200	1437,63	5,06	4111,83	14,48	1183,85	4,17	6733,31	23,71
	200—300	907,19	3,19	2205,73	7,77	885,0	3,12	3998,02	14,08
	300—400	714,61	2,52	1374,28	4,84	460,73	1,62	2549,62	8,98
	400—500	649,1	2,29	898,47	3,16	600,65	2,12	2150,23	7,57
	500—600	534,21	1,88	619,36	2,18	72,5	0,26	1226,07	4,32
	600—700	284,78	1,0	303,0	1,07	80,1	0,28	667,88	2,35
	700—800	—	—	43,02	0,15	38,85	0,14	81,87	0,29
	800-ից ավել	152,22	0,54	416,55	1,47	148,91	0,52	718,68	2,53
Գերբարձրու- թյուններ	Հարթու- թյուններ	3599,5	12,67	2614,67	9,21	174,5	0,61	6388,67	22,49
	Հյուսիսային	525,46	1,85	1745,2	6,15	703,85	2,48	2974,51	10,48
	Հարավային	848,66	2,99	1858,79	6,54	590,12	2,08	3297,57	11,61
	Արևելյան	343,37	1,2	781,22	2,75	609,67	2,15	1734,26	6,1
	Արևմտյան	276,31	0,97	1752,0	6,17	426,15	1,5	2454,46	8,64
	Հյուսիս- արևելյան	684,88	2,41	2046,85	7,21	724,09	2,55	3455,82	12,17
	Հյուսիս- արևմտյան	688,69	2,42	1145,72	4,04	446,11	1,57	2280,52	8,03
	Հարավ- արևելյան	845,25	3,0	1422,43	5,0	560,27	1,97	2827,95	9,97
Հարավ- արևմտյան	535,67	1,89	1844,43	6,51	600,47	2,13	2980,57	10,51	
Գոտու մակերեսը		8347,79	29,39	15211,31	53,57	4835,23	17,04	28394,33*	100

* Առանց Սևանա (1326,26 կմ²) և Արփի (22,0 կմ²) լճերի մակերեսների:

Թյան լեռներում, զբաղեցնելով 2922.47 բառ. կմ մակերես (10.3%): Այստեղ ուժեղ կերպով զարգացած են էրոզիոն պրոցեսները, ինտենսիվ կերպով տեղի է ունենում ուլիկա կերպարանափոխում (լվացում, տեղատարում):

Ինչպես երևում է երկրորդ աղյուսակից, մասնատման բարձր խտությամբ աչքի են ընկնում Ազիզբեկովի ($155,4 \text{ կմ}^2$), Եղեգնաձորի ($121,2 \text{ կմ}^2$), Ղափանի ($285,72 \text{ կմ}^2$) շրջանները: Թույլ մասնատում ունեն (մինչև 0.2) էջմիածնի (291.4 կմ^2) և Հոկտեմբերյանի (237.8 կմ^2) շրջանները:



Նկ. 3. Հատված մասնատման խորության քարտեզից: 1. Գետերի էրոզիոն բազիսների հարաբերական խորությունների իզոգծեր (մետրերով):

Ռելիեֆի մյուս կարևոր մորֆոմետրիկ ցուցանիշը խորքային մասնատման մեծությունն է, որը ցույց է տալիս գետերի տալվեգների խորությունը ջրաբաժանների նկատմամբ, կամ գետերի էրոզիոն բազիսի, խորությունը (Նկ. 3): Մեծանալով խորքային մասնատումը, իջնում է էրոզիոն բազիսը, որի հետ կապված ուժեղանում է ռելիեֆի հորիզոնական մասնատումը: Հանրապետության տերիտորիայում նվազագույն խորությունները դասվում են հարթավայրերում և հրաբխային սարավանդներում, առավելագույնը՝ ծալքաբեկորային լեռներում և հատկապես Զանգեզուրում: Այսպես, Ղափանի շրջանում ունենք 800 մ և ավելի մասնատման խորություններ, որոնք գրավում են $32,49 \text{ կմ}^2$ տարածություն: Մինչև 50 մետր խորությունները տարածված են Հոկտեմբերյանի ($538,42 \text{ կմ}^2$), էջմիածնի (581.82 կմ^2), Աբովյանի ($525,10 \text{ կմ}^2$) և Աշտարակի ($570,59 \text{ կմ}^2$) շրջաններում:

Կարևոր կիրառական և տեսական նշանակություն ունեն լանջերի դիրքագրությունների քարտեզները (Նկ. 4):

Ինչպես հայտնի է, լեռնալանջերն արևի նկատմամբ ունեն տարբեր դիր-

Հայկական ՍՍՀ-ի ռելիեֆի մորֆոմետրիկ ցուցանիշների մակերեսները

Վարչական շրջանների անվանումը		Հորիզոնական մասնատվածությունը (հովտային ցանցի երկաթուղիները կմ/կմ²)								Մասնատվածության խորությունը (դետերի տալիեզները քրաժաններից) (մետրերով)						
		մինչև 0,2	0,2—0,4	0,4—0,6	0,6—0,8	0,8—1,0	1,0—1,2	1,2—1,4	1,4—1,6	1,6 և ավել	մինչև 50	50—100	100—200	200—300	300—400	400—500
1	Արովյանի	63,3	280,9	188,3	197,27	33,58	82,0	—	—	—	525,1	64,2	184,85	9,7	61,5	—
2	Ագիգրեկովի	—	—	54,1	156,0	199,4	275,22	235,85	97,8	155,4	—	260,75	315,05	485,32	85,00	27,1
3	Ալավերդու	—	—	75,77	335,6	392,79	317,16	—	—	—	—	3,8	158,7	460,26	169,29	54,1
4	Ախուրյանի	81,1	187,5	121,5	139,4	52,5	5,4	25,2	—	—	316,1	133,2	163,3	—	—	—
5	Ամասիայի	—	40,2	113,05	189,1	69,11	177,0	—	—	—	168,5	193,41	201,25	24,8	—	—
6	Անիի	71,7	77,49	185,8	80,61	13,5	—	—	—	—	177,61	251,49	—	—	—	—
7	Աշտարակի	77,6	145,9	81,63	417,63	209,2	—	—	—	—	570,59	131,8	78,7	33,94	—	65,1
8	Արթիկի	—	30,32	92,6	307,4	274,0	188,7	56,41	5,31	—	328,02	114,41	449,6	49,61	—	—
9	Արտաշատի	10,4	47,22	152,35	149,6	57,6	52,3	—	26,34	—	251,55	129,02	96,24	—	—	19,1
10	Ապարանի	99,16	105,5	55,23	95,3	64,57	99,2	20,2	5,0	—	250,26	211,97	113,43	23,85	70,05	44,1
11	Բասարդեշարի	78,46	287,6	290,2	290,5	46,8	140,56	—	—	—	315,8	240,4	247,12	292,6	38,2	—
12	Գորիսի	21,8	31,21	99,4	217,7	183,04	198,81	—	—	—	—	77,9	232,0	187,94	66,3	66,1
13	Գուգարբի	—	—	28,63	97,99	268,64	261,7	135,2	—	—	—	—	97,5	156,4	157,04	58,1
14	Կղզյանաձորի	—	—	46,87	80,1	173,89	208,2	357,4	146,4	121,2	—	58,7	146,1	347,06	332,5	130,1
15	Էջմիածնի	291,21	202,0	46,81	41,8	—	—	—	—	—	581,83	—	—	—	—	—
16	Թալինի	63,4	219,0	311,7	346,32	212,78	134,4	—	—	—	1030,1	257,5	—	—	—	—
17	Իջևանի	—	24,89	104,85	370,9	476,25	260,9	80,0	33,8	—	—	17,9	259,75	247,1	120,39	400,1
18	Կալինինոյի	—	—	153,44	261,4	189,6	85,13	—	—	—	174,1	88,8	308,43	73,7	19,04	25,1
19	Կամոյի	139,21	32,9	225,0	51,2	181,3	—	23,1	—	—	342,01	145,2	—	—	65,5	—
20	Կրասնոսելսկի	—	81,4	123,01	27,23	86,25	85,4	48,22	—	—	11,5	12,0	252,87	123,3	8,3	—
21	Հոկտեմբերյանի	237,8	231,8	202,86	9,7	19,56	—	—	—	—	538,42	127,5	35,8	—	—	—
22	Հրազդանի	114,8	127,44	137,1	191,6	192,74	110,9	56,4	16,1	—	289,0	8,0	292,58	175,1	78,6	79,1
23	Ղափանի	—	—	—	58,6	427,83	598,94	285,72	—	—	—	—	135,7	169,4	356,51	164,1
24	Ղուկասյանի	—	—	30,2	189,51	239,41	65,18	20,0	—	—	107,18	81,4	289,12	29,9	36,7	—
25	Մարտունու	34,8	70,33	286,0	467,18	171,8	83,7	56,7	—	—	341,11	179,3	246,9	210,2	41,9	151,1
26	Մեղրու	—	—	—	108,6	187,67	187,67	242,32	125,0	—	—	—	67,7	6,5	387,95	77,1
27	Նոյեմբերյանի	—	62,88	97,7	170,8	93,37	113,2	—	—	—	—	48,1	195,97	216,68	77,2	—
28	Շամշադինի	6,3	5,42	134,4	249,8	228,8	199,7	—	—	—	—	—	60,7	31,3	73,2	395,1
29	Սևանի	147,63	—	80,3	86,9	24,43	101,6	—	18,1	—	206,3	—	138,73	113,93	—	—
30	Սիսիանի	—	31,1	334,4	252,3	703,49	295,59	81,2	—	20,7	—	409,0	879,0	42,79	142,0	167,1
31	Սյրիտակի	17,1	42,84	36,6	99,6	153,63	170,5	75,9	—	—	24,8	—	390,5	81,14	90,23	—
32	Ստեփանավանի	—	—	21,7	75,22	305,6	175,89	58,1	—	—	—	50,8	303,99	116,5	73,22	—
33	Վեդու	38,6	140,8	253,74	142,85	141,76	388,1	269,3	24,1	—	250,3	247,0	341,87	289,0	—	221,1
34	Քաղ. Երևան	55,2	99,36	—	—	—	—	—	—	—	95,2	—	59,36	—	—	—
	Ընդամենը	1649,57	2606,0	4165,24	6092,18	5895,82	5063,05	2127,22	497,95	297,3	6895,1	3373,55	6733,31	3998,02	2549,62	2150,1

* Առանց Սևանա (1326,26 կմ²) և Արփի (22,0 կմ²) լճերի մակերեսների

[illegible]

քաղաքային, որի հետևանքով նրանց մակերևութները ստանում են տարբեր անակությամբ արեգակնային ջերմություն, ստեղծելով տարբեր միկրոկլիմայական պայմաններ: Այսպես՝ ջերմաստիճանների տատանումները և գոլորշիացումը բարձր են հարավահայաց լանջերում, այստեղ ձյունածածկն ավելի շուտ է հալվում, վարարումները և հորդացումներն ունեն բուռն բնույթ: Հանրապետության տեղագրությամբ ընդարձակ տարածում ունեն հյուսիս-արևելյան (12,17%), հարավային (11,61%), հարավ-արևմտյան (10,51%) դիրքադրությունները, իսկ հարթ տեղանքները կազմում են 22,49%, որի մոտ կեսը գտնվում է ցածր լեռնային գոտում:



Դոյություն ունեն մորֆոմետրիկ ցուցանիշների խիստ տարբերություններ, ինչպես լեռնային գոտիների, այնպես էլ ռելիեֆի հիմնական մորֆոգենետիկ տիպերի (հրաբխային, ծալքաբեկորային և միջլեռնային գոգավորությունների) միջև: Առավել մասնատման խորություն և խտություն նկատվում է հատկապես միջին բարձրության լեռնային գոտում և ծալքաբեկորային լեռներում: Միջլեռնային գոգավորությունները և հրաբխային սարավանդներն ու լեռները բնութագրվում են թույլ մասնատման խտությամբ և նվազագույն խորքային մասնատմամբ:

Ռելիեֆի մորֆոմետրիկ քարտեզները և քանակական տվյալներն ունեն սյրակտիկ կարևոր նշանակություն: Հանրապետության գյուղատնտեսական աշխատանքների զգալի մասը կատարվում է տարբեր թեքության և կտրտվածության լեռնալանջերին, որի հաշվառումը կարևոր է գյուղատնտեսական տարբեր մեքենաների կողմից ծախսվող վառելանյութը նորմավորելու, վարի լավագույն տարբերակները ընտրելու, մեխանիզատորների աշխատանքը վարձատրելու գործում: Մորֆոմետրիական քարտեզները կարելի է օգտագործել նաև հակաէրոզիոն միջոցառումներ մշակելիս: Դիրքադրությունների քարտեզները կարևոր նշանակություն ունեն գյուղատնտեսական աշխատանքների սլանավորման համար: Հարավային դիրքադրության լանջերում հողը 1—2 շաբաթ առաջ պատրաստ է լինում հերկման և մշակման համար, քան հյուսիսայինը: Դիրքադրությունների հաշվառումը կարևոր է նաև այգիների էտի, սրսկման, ջրամատակարարման, ինչպես նաև անասունների արածման, խոտհարքների հնձման ժամկետների սլանավորման համար:

Վերջապես, մորֆոմետրիկ քարտեզների նշանակությունը մեծ է հատկապես հողերի սահմանադատման և գնահատման բնագավառում: Լեռնային երկրների հողերի գնահատման համար որոշիչ են ոչ միայն հողածածկի որակը (օրգանական նյութերի պարունակությունը, հզորությունը, մեխանիկական կազմը, ռոտչման աստիճանը), այլև նրա մորֆոմետրիական առանձնահատկությունները (մակերևութի թեքությունները, դիրքադրությունները, մասնատման խտությունը և խորությունը): Վերջիններիս դերը լեռնային երկրներում հիմնականում գերազանցում է հողային ծածկի դերին: Ռելիեֆի մորֆոմետրիական հատկանիշների փոփոխությունը պայմանավորում է տարբեր որակի հողերի գոյացումը, փոփոխելով նրանց օգտագործման հնարավորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ տեղագրությամբ, ըստ մորֆոմետրիական ցուցիչների կարելի է սահմանադատել հետևյալ հողային միավորները՝ լավագույն, լավ, միջին, ցածր որակի և ոչ ուղիղ հողատարածություններ (աղյուսակ 3):

Տարբեր որակի հողերի սահմանադատումը ըստ մորֆոմետրիական հատկանիշների ունի գյուղատնտեսական խոշոր նշանակություն, այն կարող է հիմք



Նկ. 4. Հատված գիրքադրությունների քարտեզից: 1. Հյուսիսային, 2. հյուսիս-արևելյան, 3. արևելյան, 4. հարավ-արևելյան, 5. հարավային, 6. հարավ-արևմտյան, 7. արևմտյան, 8. հյուսիս-արևմտյան, 9. հարթ տեղանքներ:

Աղյուսակ 3

Հայկական ՍՍՀ տարբեր որակի հողերի սահմանադատումը և գնահատումը ըստ մորֆոմետրիկ ցուցանիշների

Հողի որակը	Թեքության աստիճանները (աստիճաններով)	Մասնատման խտությունը (կմ/կմ ²)	Մասնատման խտությունը (մետրերով)
լավագույն	մինչև 3	մինչև 0,2	մինչև 5
լավ	3—8	0,2—1,0	5—10
միջին	8—16	1,0—2,0	10—20
ցածր	16—30	2,0—3,0	20—100
ոչ պիտանի	30 և ավել	3,0 և բարձր	100 և բարձր

հանդիսանալ հանրապետության հողային կադաստրների կազման և հողերի տնտեսական գնահատման համար:

ՀՍՍՀ ԳԱ

Նրկրարանական ինստիտուտ

Ստացվել է 21.11. 1959.

Ф. С. ГЕВОРКЯН, Д. А. ПОГОСЯН

О НЕКОТОРЫХ РЕЗУЛЬТАТАХ МОРФОМЕТРИЧЕСКОГО КАРТИРОВАНИЯ ТЕРРИТОРИИ АРМЯНСКОЙ ССР

Р е з ю м е

Рациональное и эффективное освоение и использование территории требует всестороннего и детального изучения рельефа как с качественной, так и с количественной стороны. Из отраслей народного хозяйства, сельское хозяйство наиболее чувствительно к морфометрическим особенностям рельефа.

В статье приводятся некоторые результаты картирования морфометрических показателей (густоты и глубины расчленения и экспозиции), проведенные авторами в отделе географии Института геологических наук АН Армянской ССР. На основе этих карт рассчитаны площади, занимаемые этими показателями, и полученные данные обработаны по высотным поясам и административным районам республики (таблицы 1 и 2).

Территория республики изрезана многочисленными долинами, которые весьма затрудняют комплексное освоение территории и ограничивают возможности ее рационального использования.

По величине глубины и коэффициенту густоты выделены следующие типы участков: нерасчлененный и слаборасчлененный, среднерасчлененный, сильно расчлененный и очень сильно расчлененный. С увеличением расчлененности территории увеличиваются эрозионные процессы, происходит интенсивный размыв и снос почв.

Большое практическое значение имеют также карты экспозиций, особенно при планировании сроков сельскохозяйственных работ (подрезывание, опрыскивание, водоснабжение, выпас скота, косьба, сенокос, пахота и т. д.).

Практика показывает, что морфометрические карты могут дать ценный материал планирующим и проектирующим организациям сельского хозяйства по нормированию горючего для сельскохозяйственных машин, выбора оптимального варианта пахоты, оплаты работ механизаторов, для разработки противоэрозионных и противоселевых мероприятий.

Особенно велико значение этих карт в разграничении и оценке земель в горных странах. Изменение морфометрических признаков обус-

лавливает образование почв различного качества. Разграничение земель по их морфометрическим признакам может стать основой для составления земельного кадастра республики и его экономической оценки.